ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«28» 12 2023թ. N 20/1623

<<ԼԵՈ Ա>> ՍՊԸ-ի տնօրեն՝
Լ. Աղաբեկյանին,
ՀՎՀՀ 01047644
ք. Երևան Մոլդովական փ. 50/4

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Համաձայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Գնորդ) և <<ԼԵՈ Ա>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև ՀՀ ԱԱԾ կարիքների համար ցանցային սարքավորումներների ձեռքբերման համար 2023 թվականի փետրվարի 23-ին կնքված թիվ ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-23/5-ցանցային-1 ծածկագրով «Պետության կարիքների համար ցանցային սարքավորումների ապրանքի մատակարարման» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 28.03.2023թ. կնքված N 1 (N 11/317-2023) և 31.08.2023թ. կնքված N 2 (N 11/409-2023) Համաձայնագրերի համաձայն <<ԼԵՈ Ա>> ՍՊԸ-ն ըստ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ՀՀ ԱԱԾ-ին մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ պարտավոր էր մատակարարել 24933332.40 (քսանչորս միլիոն ինը հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներկու դրամ քառասուն լումա) ՀՀ դրամ գումարի ցանցային սարքավորումներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ <<ԼԵՈ Ա>> ՍՊԸ-ի կողմից ընդհանրապես ապրանք չի մատակարարվել և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7. կետը՝ ՀՀ ԱԱԾ-ն 28.12.2023թ-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է 2023 թվականի փետրվարի 23-ին կնքված թիվ ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-23/5-ցանցային-1 ծածկագրով պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ <<ԼԵՈ Ա>> ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին Պայմանագրի 5.2 և 5.3 կետերի համաձայն փոխանցել 835 267 (ութ հարյուր երեսունհինգ հազար երկու հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ՝ որպես տույժ և տուգանք: Բացի այդ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա են գանձման համապատասխանաբար 2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և 3 750 000 (երեք միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ որակավորման ապահովում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե մինչև 2024 թվականի հունվարի 7-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված վճարման ենթակա գումարները, ապա <<ԼԵՈ Ա>> ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում՝ լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել ՀՀ ազգային անվանգության ծառայության տնտեսական վարչություն:

Ա. Հակոբյան